

Զարթո՛ւք -ը կարելի է կարդալ նաեւ համա-
ցանցի վրայ հետեւեալ հասցեով՝

www.zartonkdaily.com

հնչաբե նաեւ ձեր անհատական թղթակցու-
թիւններն ու ծանուցումները կրնաք փոխան-
ցել խմբագրութեան հետեւեալ հասցէներուն՝

e-mail: zartonkadl@gmail.com
zartonkdaily@yahoo.com

P.O.Box: 11-617 & 175-348 Beirut-Lebanon

Tel./Fax: +961 1 444225

ԶԱՐԹՈՒՔ

Օրաթերթ

ZARTONK JOURNAL POLITIQUE ARMENIEN

Հարտոնկ Ժրիտիկ Սիսապիե Արմենիե


77րդ Տարի, թիւ 3 (21,244) ԵՐԵՎԱՆԻ, 6 ՅՈՒՆԻՍԻԱՐ 2015 4 էջ 1000 Լ.Ո.

ՄԵՐ ԸՆԹԵՐՅՈՂՆԵՐՈՒՆ

Ս. Ծննդեան տօնին առիթով, «Զարթո՛ւք» շերտիկն կը շնորհաարթ իր ընթերցողները, աշխատակիցները եւ բարեկամները:

Այս առիթով պիտի ունենանք երկօրեայ արձակուրդ:

Մեր յաջող թիւը Ուրբաթ, 9 Յունուար 2015-ին:




ՆՈՐԻՆ ՍՈՐԲ ԾՈՒԹԻՒՆ Տ.Տ. ՎԱՐԵՂԻ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ

ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՄ ԲԻԲԼԻՍՏՈՒՄ

ՍՈՐԲ ԾՆՆԳԵԱՆ ԵՒ ԱՍՈՒԿՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՈՒԻ ԱՌԻՐՈՎ

(Սուրբ Էջմիածին, 6 Յունուարի, 2015 թ.)



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս. ԾՆՆԳԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

«ԵՐԵՎԱՆԻ ԱՍՏՈՒՎԾ ՄԵՐ ԿՈՂՄՆ Է, Ո՞Վ ԿՐՆԱՅ ՄԵՉԻ ՀԱՎԱՌԱԿ ԸԼԼԱՄ»

ՏՈՆԵՆ ԵՏԶ ՄԵՐ ԲԱԺԻՆԸ

«Երբ հրեշտակները անոնցմէ երկինք վերցուցանելու հովիւները իրարու ըսին. «Եկէք մինչեւ Բեթլեհեմ երթանք ու տեսնենք թէ ի՞նչ է այս եղած բանը զոր Տէրը մեզի ցուցուց»»

(Ղկ. 2.15):

«Որ ի հրեղէն աթոռ ընդ Յոր ես բնակեալ եւ ի հրեշտակաց սպասաւորեալ, այսօր կամով Յոր ի յերկրի երեւեցար մարմնով կուսական ծննդեամբ, զԵզ ընդ զօրս անմարմնաց անդադար օրհնաբանեմք» (Շարական Ս. Ծննդեան):

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ,
Շարականագրի աղօթամատոյց այս օրհներգով բերում եմ ձեզ մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտու-
թեան սքանչելի ակնարկը:

Երկնային բարձունքներում Ամենակալ Յորն աթոռակից եւ հրեշտակներից սպասաւորեալ Աստուծոյ Որդին մարմնացաւ եւ աշխարհի եկաւ, որպէսզի ընդունենք փրկութեան յոյսն ու շնորհը եւ միշտ նորոգուող կեանքը, որ Փրկիչ մեր Տէրն է պարզե-
լուծ: Բեթլեհեմում ծնուած Մանուկը նոր սիրտ ու հոգի է բերում աշխարհին՝ ճանաչելու Աստուծոյ սերը մարդկանց հանդէպ եւ այն դարձնելու արդարութիւն, խաղաղութիւն ու սէր միմեանց հանդէպ: Բերում է զօրութիւնը՝ փարատելու անյուսութեան խաւարները եւ երկրի վրայ հաստատելու սիրով լի այն կեանքը, որն ունի յաւիտենական կեանքի ակնարկը:

Սուրբ Ծննդեան ակնարկական պատումը մարդկութեան կեանքում Աստուծոյ ներկայութեան մեծ խորհուրդն է պատկեր-
ում: Բեթլեհեմի քարայրը նախատիպն է Սուրբ Եկեղեցու, հա-
սարակ հովիւները եւ իմաստուն մտքերը աստուածապաշտու-
թեան համար մեկտեղուած հաւատացեալներն են, իսկ մա-
տուցուած ընծաները՝ առ Աստուած հաւատարմութեամբ բարի ու երկնահաճոյ կեանքն ու գործերը: Բեթլեհեմեան երկնակա-
մարում Տիրոջ փառքի ծագումը, եւ լուսափայլ հրեշտակների
հնչեցրած պատգամը երկնային հրաւերն է աշխարհին՝ խաղա-
ղութեան ու մարդկանց մէջ սիրոյ եւ հաճութեան, որոնց այսօր
էլ փափագում է ներդրութիւններով ու մարտահրաւերներով բեռ-
նաւորուած աստուածաստեղծ օրրանը մարդկութեան:

Նիւթատելնիկական մեծ ձեռքբերումներ արձանագրած, գիտական բարձունքներ նուաճած ներկայ աշխարհում չեն դա-
դարում կեանքի խաղաղութիւնն ու բարօրութիւնը խաթարող տագնապներն ու ցնցումները: Զաղաքական հակամարտու-
թիւնները, ռազմական բախումները, խորացող ֆինանսական, տնտեսական ճգնաժամները բերում են անէր, վիշտ ու տառա-
պան, կարիքի եւ անապահովութեան նոր խնդիրներ: Մարդ-
կային ընթանումներում խեղաթիւրում են աստուածային իմ-
պարտ սկզբունքները՝ մարդը չի ընկալուում որպէս Աստուծոյ
պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած, կեանքը՝ որպէս երկ-
նաշնորհ գերագոյն պարզեւ եւ մերձաւորի հանդէպ սերը՝
որպէս աստուածամանութիւն: Այս իրավիճակները եւ մտածո-
ղութեան այսպիսի աղաւաղումները հեռացնում են մարդուն
հոգեւորից, առաջնորդելով աստուածամեծի ընթացքների՝ մար-
դու եւ ազգերի իրաւունքների ոտնահարման, ըստանիքի գա-
ղափարի, բարոյական արժեքների աղճատման:

Հակառակ Աստուծային կամքին մարդու հակրտնեայ ըն-
թացքների՝ մարդեղութեան մեծ խորհրդով Տէրը ցույց տուեց,
որ իր անսահման սիրոյ ու խնամքի մէջ է աստուածաստեղծ
մարդը, եւ երկրային գոյութիւնը բաժանուած չէ յաւիտենութի-
ւից, իսկ մարդկութեան պատմութիւնը՝ Աստուծոյ ներկայութի-
ւից: «Ահա ես ձեզ հետ եմ բոլոր օրերում» մինչեւ աշխարհի
վախճանը» (Մատթ. ԻԸ 20),-ասում է Փրկիչ մեր Տէրը: Մարդկա-
յին կեանքում Փրկչի մշտական ներկայութիւնը նոր իմաստ է
պարզելում, բարձր ու վե՛ր բովանդակութիւն հաղորդում մար-
դու եւ աշխարհի ընկալմանը՝ բերելով մարդկանց Աստուծոյ
ժողովուրդ լինելու գիտակցութիւնն ու պատասխանատուու-
թիւնը եւ իրաւերը՝ մնալու եւ յարատեւելու «սիրեցէք միմեանց»
Տիրոջ նոր պատուիրակի մէջ (Յովհ. ԺԳ 34): Մերձաւորի հան-
դէպ սերը վե՛տացնում եւ արժեւորում է մարդուն եւ նրա գործե-
րը, պահում աստուածամանութեան շնորհի մէջ եւ հանրութեան
կեանքը հաստատում բարու մէջ: Միմեանց հանդէպ սիրով ա-
ռաջնորդող հասարակութիւնը կարող է թիւեցնել կեանքը ոռո-
գող հոգեւոր ներուժի անսպառ աղբիւրներ, լինել ճշմարտապէս
արդարամիտ եւ իրաւադատ, կարեկից ու ողորմած: Տէրունա-
պատելու այս ուղիով մարդկութիւնը կարող է ձեռքբաւորել
աղետաբեր իրավիճակներից եւ հոգեւորից, դիմակայել ներու-
թիւնների, արդարութեամբ հարթել հակառակութիւնները եւ
համերաշխ գոյակցութեամբ կերտել նոր օրը մարդկութեան
կեանքի:

Սիրելի բարեպաշտ ժողովուրդ, Սուրբ Ծննդեան օրհներգին
ու փառաբանութեան այսօր միախառնուում են մեր սրտա-
բուխ աղօթքները յանուն Յայոց Ցեղասպանութեան մեր անմեղ
նահատակների, ովքեր չուրացան Փրկչին, իրենց ինքնութիւնն
ու սուրբ հաւատը: Եղեռնի դառնալուտ տարիների ամենա-
դաժան փորձութեանց մէջ անգամ չունեց Փրկչին ուղղուած՝ մեր
ժողովրդի հոգու օրհներգը: Մեր Տիրոջ հետ գտանք ոգին եւ
ուժը վերածննդի, պետականութիւն կերտեցինք, ազգային մեր
կեանքը բարձրացրեցինք, մեր իրաւունքների համար պայքա-
րեցինք բաւատով, որ արդարութեան եւ ճշմարտութեան ուղի-
ները պիտի կերտեն բռնութիւնից զերծ, մարդասեր ու խաղաղ
աշխարհ:

ՎԱՐԵՂԻ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

6 Յունուար, 2015
Էջմիածին-Յայաստան

(Շար.ը՝ էջ 2)

Աստուծային ճշմարտութեան պատգամաբերները, մարգա-
րէները իրենց ժողովուրդի պատմութեան ամենէն ճգնաժամա-
յին պահերուն պատգամեցին՝ մի՛ վախճաք, որովհետեւ Աստուած
մեզի հետ է: Այս հաւատքով շաղախուած ու յոյսով գօտեպնդուած
բերայեցի ժողովուրդը յաղթահարեց ամեն տեսակ չար ու չար-
իքը, որոնք յաճախ շրջապատեցին զինք իր դարաւոր պատմու-
թեան ընթացքին:

Աստուածաշունչը յստակօրէն կը պարզէ, թէ Աստուած երբեք
չլքեց մարդը, չհեռացաւ իր Արարիչէն հեռացած արարածէն:
Աստուած նոյնիսկ մեղքի տիրապետութեան ենթակայ դարձած
մարդուն հետ եղաւ, որպէսզի զինք ազատագրէ չարի կայանք-
ներէն: Հին Կտակարանը մարդուն հետ ըլլալու, մարդը դէպի ա-
զատագրութիւն ու արդարութիւն, այլ խօսքով՝ փրկութիւն ա-
ռաջնորդելու Աստուծոյ սիրոյն պատմութիւնն է, հակառակ Աս-
տուծոյ սերը մերժելու եւ պատուէրը անտեսելու մարդուն բա-
ցասական վարքագծին ու ծխտական վերաբերումին:

Մարդուն հետ ըլլալու, մարդուն առջեւ հաւատքի, յոյսի ու
սիրոյ ճանապարհը բնաւուր Աստուծոյ յանձնառութիւնը իր գե-
րագոյն արտայայտութիւնը կը գտնէ Նոր Կտակարանին մէջ:
Ինչպէս կը հաստատէ Աւետարանիչը, Աստուած այնքան սիրեց
մարդը, որ նոյնիսկ իր Միածին Որդին զրկեց աշխարհի (Յովհ. 3.
16): Բեթլեհեմի ճամբով Աստուած դա՛րձեալ, եւ այս անգամ ա-
ւելի շօշափելի ու տեսանելի կերպով, եղաւ մարդուն հետ: Ար-
դարեւ, Աստուած ո՛չ միայն մարդուն հետ եղաւ, այլ նաեւ մար-
դուն համար: Իր ուսուցումներուն ու հրաշարգործութիւններուն
ճամբով Աստուծոյ մարդեղացեալ Որդին յիշեցուց մեղաւորին ու
հիւանդին, զրկեալ ու հալածուող մարդուն, թէ մի՛ վախճար, այլ
հաւատա՛ր, որովհետեւ Աստուած քեզի հետ է:

Քրիստոսի Աւետարանին քարոզիչները, Աւետարանիչներ ու
Առաքեալներ, յաճախակի կերպով յիշեցուցին կեանքի մաքա-
ռումներուն ու տագնապներուն դէմ գտնուող Քրիստոսի հետե-
ւորդներուն, թէ **«Եթէ Աստուած մեր կողմն է, ո՞վ կրնայ մեզի հա-
կառակ ըլլալ»** (Յովհ. 8. 31):

Արդարեւ, Աստուածաշունչը սոսկ աստուածային յայտնու-
թեան դրուագները պարունակող գիրք չէ: Ան Աստուծոյ յաւեր-
ժախօս պատգամն է: Աստուածաշունչի ճամբով Աստուած կը
խօսի մեզի հետ, թէ մենք պատրաստ ենք լսելու զինք: Աստու-
ածաշունչի ճամբով Աստուած մեզի հետ կ'ըլլայ, եթէ մենք պատ-
րաստ ենք իր հետ ըլլալու:

Աստուծոյ խօսքը լսող առաջին ժողովուրդը եղանք: Մեր պատ-
մութեան ուրախ ու մաշյալ օրերուն Աստուած մեզի հետ եղաւ:
Աստուծոյ ներկայութեամբ զօրացած, հաւատքով ու քաջու-
թեամբ քալեցինք Աւետարանի ճամբէն: «Ո՛չ» ըսինք յուսահա-
տութեան ու կառչեցանք յոյսին. «ո՛չ» ըսինք վախին ու քաջու-
թեամբ զինուցանք. «ո՛չ» ըսինք մահուան՝ ու քալեցինք դէպի
կեանք: Մենք հաւատացինք Առաքեալի վկայութեան ու խոս-
քին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Ս. ԾՆՆԳԵԱՆ ԿԻՆԿԻԿՈՑ

6 Յունուար, 2015
Անթիլիաս-Լիբանան

(Շար.ը՝ էջ 2)

Մինչ կը տօնենք Աստուածայայտութիւնը՝ Տէր Յիսուս Քրիս-
տոսի Սուրբ Ծննդեան տօնին մէջ, մեր խորհուրդները կ'երթան
անոնց, որոնք ներդրութեան եւ վախի մէջ կը տառապին, կորսնցնե-
լով իրենց խաղաղութիւնը: Տօները, մեր նախնիներէն նշանակա-
ւած, մեր ապրած ժամանակները կը բաժնեն մասերու, կարծես
տանելի դարձնելու համար ժամանակներուն բերած ցաւերը:
Ամբողջ ժամանակին ամբողջ ցաւը անտանելի պիտի ըլլար: Ու-
րեմն, վախի եւ ցաւի ամբողջութիւնը կարծես կը բաժնուի հաւ-
գրուաններու կամ մասերու, որպէսզի կարելի ըլլայ տոկալ ա-
նոնց բերած ճշուններուն: Իսկ այդ ճշունները ամէն տեղ են եւ
ամէն դասակարգի համար իրական: Եթէ կը մտածուէր, թէ միայն
Միջին Արեւելքի երկիրներու յատուկ են անոնք, ապա անցնող
շրջանին՝ վախերու եւ ցաւերու իրական ճշունները հասան
Աւստրալիայէն մինչեւ Միացեալ Նահանգներ, Չինաստանէն
մինչեւ Ուրբայնա եւ այլուր: Ահաբեկչութիւնը սահման եւ բա-
րոյականութիւն չի ճանչար, ընկերային-դասակարգային անի-
րաւութիւնը կը հարուածէ ամէն կողմ, իսկ երկու-չափ-երկու-
կէզի երեւոյթը կը ջլատէ խաղաղութեան ամէն փորձ եւ ջանք:

Մարդուն մեղքին ստեղծած այս մթնոլորտին մէջ, մենք՝ Հայ
Ազգի գաւակներս, վեր կ'առնենք մեր Ազգին վրայ գործարդուած
Յեղասպանութեան հարիւրերորդ տարին: Արդարութեան եւ
հատուցումի պահանջատեր ըլլալով, մենք կը դիմաւորենք նոր
ժամանակները, որոնց մէջ՝ պարզապէս նոր բան մը փնտռելը
անիրատես փորձ պիտի ըլլայ: Ժամանակները հասկնալու հա-
մար, ուրեմն, անհրաժեշտ է նայիլ դէպքերուն՝ անոնք յառաջ բե-
րած բարոյականութեան փաստին, փոփոխութիւնները փնտռե-
լով այդ մակարդակին վրայ: Եթէ փոխուած բան մը գտնենք
մարդոց բարոյականութեան մէջ, նոյնիսկ՝ մեր դարաւոր թշնա-
միին բարոյականութեան մէջ, ապա փոխուած պիտի ըլլան
շատ մը իրականութիւններ, եւ նժարը պիտի հակի արդարու-
թիւնը կողմը: Ահա այդ մակարդակի փոփոխութիւնն է, որ
կրնայ յուսադրել մեզ մեր պահանջած արդարութեան եւ արդար
հատուցման ուղիին վրայ: Ու ասիկա՝ տեսնելու եւ հասկնալու,
ընենելու եւ փորձառաքար չափելու բան է:

Սքանչելի է տեսնել Աւետարանի հովիւները՝ Բեթլեհեմի ճամ-
բուն վրայ: Հրեշտակին հաղորդած փրկութեան պատգամն ենք,
հրեշտակներու սքանչելի երգեցողութենէն ենք՝ «Եկէք մինչեւ
Բեթլեհեմ երթանք» որոշումը շատ բան ունի մեզի սորվեցնելիք:
Նախ՝ որ հրեշտակներու երգէն ենք՝ զգացական տպաւորու-
թիւններու վրայ չմնանք: Անհրաժեշտ է Աստուծոյ մեզի ցոյց
տուածները ստուգել եւ հասկնալ: Ասիկա մեր բաժինն է: Աստ-
ած իր բաժինը ըրած է եւ կ'ընէ, իսկ մեր բաժինը... մեր բաժինն
է: «Տեսնենք թէ ի՞նչ է այս բանը զոր Տէրը մեզի ցուցուց»: Վա-
խէն անդին, յոյսէն անդին, ուրախութենէն թէ տրտմութենէն
անդին կայ բան մը, որ մենք պիտի ընենք: Այդ մեր ընելիքը՝
տեսնել եւ հասկնալ է, թէ Աստուած մեզի ինչ ըսած է եւ ինչ կ'ընէ:
Տօներով բաժնուած, ժամանակահատուածներով պարզացուած
իրականութիւններն անդին՝ անհրաժեշտ է տեսնել ճշմարտու-
թիւնը, որ աստուածային կամքն է եւ կարգադրութիւն: Ուրեմն՝
ամէն բան իր որակին մէջ անոր է որ պիտի միացնենք: Այլա-
պէս, մեր ոյժերը կը վատնուին եւ մեր կարելիութիւնները ա-
պարդին կը մնան:

ՎԵՐ. ՄԿՐՏԻՉ ՎԱՐԱԿԵՕԶԵԱՆ

Նախագահ, Մ.Ա.Հ.Ա.Ե. Միութեան

(Շար.ը՝ էջ 2)

ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆԻ Ս. ԾՆՆԳԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

Ամանորի եւ Ս. Ծննդեան տօներուն առիթով, կու գամ սրտա-
գինս շնորհաւորել Լիբանանահայ մեր ժողովուրդի գաւակները
եւ մաղթել, որ գալիք ժամանակները մեզ առաջնորդեն անելի
բարիքի, վստօնի ու ճշմարիտի, որպէսզի ի խնդիր մեր քրիս-
տոնեական եւ ազգային արժեքներու յարատեւութեան ու վերա-
ծաղկումի, ազգովին դառնանք անելի պայծառատես ու արի:

2015 թուականը, մեր հաւաքականութեան կը բերէ Հայոց
Ցեղասպանութեան գարնանաշունչներուն ու մեր ազգութեան
կորսնցուցած արժեքներուն հարիւրամեայ յիշատակը: Տագնապ-
ներով լեցուն արդի աշխարհին մէջ, մեր ժողովուրդին համար
հարկաւոր են նոր հոգի ու նորոգեալ կամք, որպէսզի կարողա-
նանք Հայոց Ցեղասպանութեան 100 ամեակին առիթով, խա-
ղաղութեամբ յիշել մեր մէկ ու կէս միլիոն նահատակները եւ
պատիւ ընծայել նաեւ անոնք, որոնք ի սփիւռս աշխարհի եւ ի
խնդիր Հայրենիքի ու ազգութեան լինելութեան, հաւատարմու-
թեամբ կը պահեն մեր անմահ նահատակներուն կտակը ու
վճարկամութեամբ կը շարունակեն պահանջել մեզմէ խլուածն
ու յափշտակումը:

Տօնական այս մթնոլորտին մէջ եւ անելի պայծառ օրերու
անկկարկութեամբ, կ'աղօթեմ, որ բարին Աստուած, յաւելեալ յոյս
եւ քաջութիւն ներշնչէ մեր հաւաքականութեան: Թող որ Ս.
Ծնունդով Աստուածային սիրոյ ճառագայթը դարձնէլ ցոյլ
մեր ազգին վրայ ու մեր մէջ պլպլացնէ մեր նախնիներուն հա-
ւատքի ճրագը, որպէսզի տագնապներով լեցուն արդի աշխար-
հին մէջ, մենք կարենանք քրիստոնեական արժեքներու եւ ազ-
գային մեր շունչին յարատեւութեան համար, գտնել նոր կամք
ու յաւելեալ կորով:

2015 թուականը, նշանակալից կրնայ դառնալ մեզի համար,
եթէ ուխտի գիտակցութեամբ կարենանք յաւելեալ գուրգուրան-
քով վարուիլ հայրենական ասանդներուն ու յիշատակներուն

հետ եւ զանոնք հաւատարմութեամբ փոխանցենք նորահաս
սերունդներուն, որպէսզի անոնք եւս քաջութեամբ տանին ի-
րենց կեանքին պայքարը:

Այս հաւագրուանին, պէտք է վերստին կեանք տանք այն հա-
ւատքին, որ դար մը ամբողջ, սփիւռքեան մեր պայմաններուն
մէջ իսկ, մեզ կանգուն պահեց իբէ ցեղային միաւոր եւ իւրա-
յատուկ դիմագիծ ունեցող հաւաքականութիւն: Հաւաքաբար
կարիքը ունինք յաւելեալ հաւատք ու տեսիլքի, որպէսզի, արդի
կեանքէն եկող ու մեր ժողովուրդին նկարագիրը խաթարող, մեզ
այլաստեող եւ բարոյապէս մեր ազգային ամրութիւնը քայքայող
հոսանքներուն դիմաց, մեր պայքարուն հաւատքի լոյսը դարձ-
եալ ողողէ մեզ ու աստուածային առաքիւնութիւններ հաստատ-
ւին մեր կեանքէն ներս:

Այս սպասումներով կ'աղօթեմ, որ ամենաբարին Աստուած
առաւել եւս զօրացնէ եւ արդիւնաւոր Լիբանանի Հայոց Թեմի
սահմաններէն ներս ու մեր ազգի կեանքին մէջ գործող մեր եկե-
ղեցիներուն, վարժարաններուն, հոգեւոր եւ ազգային կերտու-
ններուն, մշակութային, բարեսիրական, մարզական, հայրենակ-
ցական միութիւններուն, մամլոյ գործակալութեանց եւ ընկե-
րային ու քաղաքական կառույցներուն եւ մարմիններուն աշխա-
տանքը, բարօր կեանք պարգեւէ մեր ժողովուրդին ամենաւրեք,
մեր Հայրենիքը դարձնէ անելի բարգաւառ ու ծաղկուն եւ մեզ
հաւաքաբար առաջնորդէ մեր մաքառումներու եւ ձգտումներու
ամբողջական պատկումին:

Ձեզ եւ մեզ անտօխ. Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ: Օրհնեալ է յայտնութիւնն Քրիստոսի:

Աղօթարար՝

ՇԱՀԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
Առաջնորդ Լիբանանի Հայոց

ՍԱԼԱՄ ՊԻՏԻ ԲՆՆԱՐԿԵ ԿԱՐԳ ՄԸ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Լիբանանեան կառավարութիւնը Նոր Տարուան առաջին նիստը պիտի գումար Զինգաթթի օր, վարչապետարանին մէջ: Վարչապետ Սալամ սեդանի վրայ պիտի ներկայացնէ կարգ մը նախարարութիւններու գործունեութիւնը վերաշխուժացնելու օրակարգ մը: Սալամ շրջանէ մը ի վեր դժգոհութիւն կ'արտայայտէ կարգ մը նախարարութիւններու աշխատելու մասին: Սալամի քննադատութիւնը մասնաւորաբար ուղղուած է Փաղանգաւոր Կուսակցութիւնը ներկայացնող նախարարներուն:



Երեկ երեկոյեան Այն Քիթի մէջ տեղի ունեցաւ Զըզպալլայի եւ Մուսթաքապալ Զոսանքի միջեւ երկխօսութեան երկրորդ հանգրուանը: Նախքան նիստը խորհրդարանի նախագահ Նեպի Պըրրի դիտել տուաւ, որ նիստին մասնակիցները լրջօրէն պիտի քննարկեն սիւնի եւ շիի համայնքներուն միջեւ լարուածութիւնը մեղմացնելու կարելիութիւնները: Միւս կողմէ, լրատուական արգիւրներ հաղորդեցին, թէ երկխօսութեան նիստին մասնակիցները միջոց պիտի չունենան՝ սպառնիչ ձեւով քննարկելու Սուրիոյ հակամարտութեան մէջ Զըզպալլայի մասնակցութեան հարցը, որովհետեւ այս մէկը շրջանային խաղաղութիւնը սկսած է ծանայել Իրանին:

Պըրրի միաժամանակ իր զօրակցութիւնը յայտնեց ժամաժամու երկխօսութեան: Անու-ժամաժամ երկխօսութեան նախապատրաստութիւններուն ծիրին մէջ, երեսփոխան Իպրահիմ Զեւան հանդիպումներ կ'ունենայ Լիբանանեան Ուժեր Կուսակցութեան տեղեկատուական դիւանի պատասխանատու Մըլիհէմ Ռիաշիի հետ: Զեւան նշեց, թէ Անու-ժամաժամ երկխօսութեան նախապատրաստութիւնը տեղի կ'ունենայ հանդարտ կրակի վրայ եւ պիտի դառնայ նախագահական ընտրութիւններուն «լիբանանեան» տարագ մը գտնելու փորձ:

Ապահովական աղբիւրներ հաղորդեցին, թէ սուրիական Ֆալիթա գիւղին մէջ, բանակին եւ ահաբեկիչներու միջեւ բախումները որբէւ ազդեցութիւն պիտի չունենան Արւելի շրջանին մէջ տիրող կացութեան վրայ:

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

- Զըզպալլայի ընդհանուր քարտուղար Զասան Նասրալլա խօսք մը պիտի արտասանէ յառաջիկայ Ուրբաթ կէսօրուան ժամը 2.30-ին, Մուհամմետ մարգարէի ծննդեան տարեդարձին առիթով: Նասրալլա պիտի վերլուծէ լիբանանեան եւ շրջանային զարգացումները ու արտայայտէ Զըզպալլայի կեցումաձեւերը:

- Ելեմտական հարցերու նախարար Ալի Զասան հալիլ յաճախակի այցելութիւններ կու տայ Նաւահանգիստ: Նախարարը բացայայտած է կարգ մը խախտումներ, որոնց մասին մտադրած է բանալ հետաքննութիւն:

- Ընկերային հարցերու նախարար Ռաշիտ Տըրպաս յայտարարեց, թէ Լիբանան մուտք գործող սուրիացիներուն վերաբերեալ Նոր օրէնսդրութիւնը ոչ մէկ սպառնալիք կը ներկայացնէ լիբանանեան հողերու վրայ բնակող սուրիացի գաղթականներուն: Տըրպաս դիտել տուաւ, թէ սուրիացի գործաւորները սահմանագիծին վրայ պիտի ստանան մուտքի անցագիր, այն պայմանով որ անոնք ամսուան մը ընթացքին կանոնաւորեն իրենց աշխատանքային փաստաթուղթերը: Նախարարը դիտել տուաւ, որ Լիբանան գտնուող սուրիացի գործաւորներուն միայն 35 առ հարիւրը օրինականացուցած են իրենց փաստաթուղթերը:

ՆԵՐԻՆՈՒԺՈՒՄԻ ԱԶԵՐԻԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՍԱՏՆՈՒԵՑ ԶԱԽՈՂՈՒԹԵԱՆ

Լեռնային Ղարաբաղի պաշտպանութեան նախարարութեան մամուլի ծառայութիւնը հաղորդում է, որ անցած գիշեր ժամը 3:15-ի սահմաններում Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի հարաւային եւ արեւելեան ուղղութիւններով հակառակորդը ձեռնարկել է տիրուած հետախուզական երկու գործողութիւն:

Ըստ հաղորդագրութեան, Պաշտպանութեան բանակի առաջապահ ստորաբաժանումների կողմից ձեռնարկուած օպերատիւ գործողութիւնների արդիւնքում կորուստներ կրելով՝ հակառակորդը հետ է շարժուել իր ելման դիրքերը:

«Աւաղ, հակառակորդին դիմակայելու ընթացքում զոհուել են ՊԲ զինծառայողներ Կարէն Սամուելի Գրիգորեանը եւ Վարդան Մարտիկի Մկրտչեանը: Վիրաւորում է ստացել զինծառայողը»:



յող Վոլոտիա Գագիկի Յարութիւնեանը», փոխանցում է Լեռնային Ղարաբաղի ռազմական գերատեսչութիւնը:

«ԼԳՅ պաշտպանութեան նախարարութիւնը կ'իսում է կորստեան ծանր վիշտը եւ իր զօրակցութիւնը յայտնում զոհուած զինծառայողների ընտանիքների անդամներին, հարազատներին եւ ծառայակիցներին», ասուած է հաղորդագրութիւնում:

Միջադէպի մանրամասները պարզելու համար տարում է ընկուցիւն:

«Ազատութեան» հետ հեռախօսագրոյցում Լեռնային Ղարաբաղի նախագահի մամուլի խօսակցի Դաւիթ Պապայեանն ասաց, որ իրավիճակը վերահսկելի է:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

(Շարունակուած Ա. Էջէն)

տումին, թէ «Եթէ Աստուած մեր կողմն է, ո՛վ կրնայ մեզի հակառակ ըլլալ»...: 2015 տարուան սեմին, Առաքելին Նոյն բառերը դարձեալ կը հնչեն հայ կեանքէն ներս:

Պահ մը երեակայեցէ 1915 թուականը մեր ժողովուրդի պատմութեան մէջ. ջարդ, աքսոր, անորոշութիւն... մեկուկէ միկիւն զոհ, հարիւր հազարաւոր որբեր, գաղթականներ՝ անօթի ու անտուն...:

Ու այսօր, 2015 թուականին, Յեղասպանութեան ու հայրենագրութեան ենթարկուած ժողովուրդը ունի իր հաւատքով ու յոյսով կերտուած, իր արիւնով ու քրտինքով վերանակախացած Զայրենիք, ազատագրուած Արցախ, կազմակերպուած Սփիւռք եւ յառաջդիմելու եւ հզօրանալու հոգեկան, մտաւոր ու տնտեսական լայն կարելիութիւններ:

Արդարեւ, 100 տարին ոչի՛նչ է ազգի մը դարաւոր պատմութեան մէջ: Արդ, այս կարճ ժամանակահատուածի ընթացքին, ազգի մը համար մահէն կեանք քալելը, իր անկախութիւնը վերահաստատելը եւ ցեղասպանին ու աշխարհին դիմաց ամուր վճարակամութեամբ կանգնած, իր բռնաբարուած իրաւունքները պահանջելը փաստօրէն հրաշքի համագօր երեւոյթ է:

Աստուած անոնց հետ է, որ ծարաւ են արդարութեան ու կը պայքարին ի խնդիր արդարութեան (Մատթ. 5: 6): Արդարութիւնը ստուածատուր պարգէ է. ո՛չ ոք իրաւունք ունի գայն խլելու ուրիշէն: Քրիստոս երակի տուաւ բոլոր անոնց, որոնք յանձնառու են արդարութեան համար գործելու: Արդարութիւնը նաեւ աստուածատուր առաքելութիւն է. իւրաքանչիւր անհատ թէ ազգ կոչուած է գայն պաշտպանելու եւ իրագործելու: Զետեւաբար, ան որ արդարութեան համար կը պայքարի, Աստուած անոր հետ է եւ հետեւաբար, ո՛չ ոք կրնայ հակառակ ըլլալ անոր: Այն է մեր քրիստոնէական հաւատքը:

Այս սրբապատկերուած արդարութեան համար պայքարը դարձուցինք ամենօրեայ տաղանակ. արդարութեան ծարաւը միշտ մնաց անբաժան իւրաքանչիւր հայու կեանքէն. արդարութեան ձգտումը վերանորոգ հաւատք ու յոյս ներշնչեց մեր ժողովուրդին: Ի խնդիր արդարութեան հայ ժողովուրդի պայքարը կը շարունակուի, պէ՛տք է շարունակուի...:

Աստուծոյ Որդւոյն ծնունդը յիշեցում մըն է, թէ Աստուած արդար է, արդարին ու արդարութեան հետ:

Աստուծոյ Որդւոյն ծնունդը յիշեցում մըն է որ Աստուած մեզի հետ եղաւ ու միշտ մեզի հետ:

Արդ, ժողովուրդ հայոց, չուն արդարութեան տիրանալու քու հաւատքդ երբեք ընկրկում չունենայ, քու յոյսդ՝ տկարացում, քու պայքարդ՝ նահանջ. միշտ հաւատա՛յ արդարութեան յաղթանակին: Մի՛ մոռնար քու նահատակներդ, հաւատարիմ մնացիր անոնց սրբապատկերուած կեանքին: Միասնական ոգիով ու վճռակամ կեցումաձեւով արդարութիւն պահանջէ: Եւ ա՛յն գիտակցութեամբ ու յանձնառութեամբ արժեւորէ 2015 թուականի իւրաքանչիւր օրը քու եւ քու ազգիդ կեանքին մէջ:

Աստուածայայտնութեան հոգեպարար տօնին առիթով Զայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Զայաստանի Զանրապետութեան Վսեմաշուք Նախագահ Տիար Սեթ Սարգսեանը, մաղթելով իրեն արդիւնաւատ հայրենասիրտ գործունեութիւն:

Եղբայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Զայոց Կաթողիկոսը, հայցելով Ամենաբարին Աստուծմէ, որ իրեն շնորհէ եկեղեցաշէն իրագործումներով հարուստ երկար գահակալութիւն: Նո՛յն սիրով կ'ողջունենք Երուսաղէմի Զայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Նուրիան Արք. Մանուկեանը եւ Կոստանդնուպոլսոյ Զայոց Պատրիարք՝ Ամենապատիւ Տ. Մեսրոպ Արք. Մուսթաֆեանը, մաղթելով իրենց եկեղեցանուէր ծառայութեամբ լեցուն գահակալութիւն:

Զայրական անհուն սիրով կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ենթակայ մեր Թեմակալ Առաջնորդները, հոգեւորական ողջ, ազգային իշխանութեանց մարմինները եւ մեր սիրելի ժողովուրդին գաւակները, աղօթելով որ Բեղեղեմի Փրկիչը առաջնորդ ու պահպան ըլլայ իրենց:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԺՈՒԹԻՒՆ Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ շԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ

(Շարունակուած Ա. Էջէն)

Զայոց Ցեղասպանութեան ոճրից 100 տարի անց Նոյն հաւատով ու վստահութեամբ շարունակում ենք մեր պայքարը՝ յանուն մեր արդար Դատի, մեր խաղաղ կեանքի՝ չղաղարող շրջափակման եւ պատերազմի վերսկսման պայմաններում: Այսօր մեր կեանքում առկայ բազմաթիւ իրամայականների ու խնդիրների առջեւ, սիրելիներ, առաւել ջանք ու Նուիրում ներդնենք, յանձն առնենք հայրենաշէն եւ ազգաշէն ծրագրեր ու գործեր՝ ի սեր մեր ժողովրդի բարօրութեան, մեր երկրի հզօրութեան, մեր իղծերի իրականացման: Մեր կեանքը ապրենք հայրենեաց ասակներով, հաւատարիմ քրիստոնէական մեր արժեքներին, նիւթապաշտութեանը դիմակայելով աստուածապաշտութեամբ, շահամուտութեան դէմ դնելով Տիրոջ կողմից գովաբանուած ողորմութիւնը (Մատթ. Ե 7), ուժի եւ ստիպողականութեան փոխարեն՝ քրիստոնապատուէր սերը (Յովհ. ԺԳ 34-35), եսասիրութեան եւ շահագործման փոխարեն՝ բարի սամարացու նման կարիքաւորին օգնելը (Ղուկ. Ժ 30-37), եղբայրատեսցութեան փոխարեն՝ առաքելի յորդորած եղբայրսիրութիւնը (Զոմ. ԺԲ 10) եւ մեր մեծերի օրինակով՝ «ես»ի փոխարեն՝ «ազգ»ը: Բարգաւաճենք եւ զօրանանք ընտանիքներում Նոր գաւակների ծնունդով, ազգանուիրումի, հայրենասիրութեան Նոր վկայութիւններով՝ մեր ազատ երկրից, Սփիւռքի եզերքներից, վերականգնուած եւ Նորակառոյց մեր եկեղեցիներից, հանսուր հայ կեանքից երկինք բարձրացնելով մեր հայրերի օրհներգը. «ԳԶԵԳ ընդ զօրս անմարմնոցն անաղաթր օրհնաբանմք»:

Սուրբ Մենդեան խնայազին անտիպող ողջոյն քն յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Նուիրապետական Աթոռների Գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսին, Երուսաղէմի Զայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Նուրիան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Զայոց Պատրիարք Ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուսթաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին՝ մաղթելով Տիրոջ զօրակցութեան իրենց առաքելութեանը՝ ի զօրացում մեր ժողովրդի հոգեւոր կեանքի եւ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու:

Ողջունում ենք Երոյ Եկեղեցիների հոգեւոր Պետերին՝ Փրկչի ամենաառաւ շնորհները հայցելով իրենց եւ իրենց հաւատարու հօտին:

Զայրապետական օրհնութեամբ մեր բարեմաղթանքներն ու ողջոյնն ենք բերում Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Զայաստանի Զանրապետութեան Նախագահ տիար Սեթ Սարգսեանին եւ Առաջին տիկնոջը, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Զանրապետութեան Նախագահ Տիար Բալո Սահակեանին, հայոց պետական ասպետներ՝ աղօթքով, որ Տիրոջ օրհնութեամբ արգասաւորուեն մեր երկրի եւ ժողովրդի խաղաղութեանն ու բարօրութեանը եւ մեր ժողովրդի իրաւունքների պաշտպանութեանն ուղղուած նրանց ջանքերը:

Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Զայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին՝ մաղթելով արգասաբեր գործունեութիւն՝ ի նպաստ մեր ժողովուրդների բարեկամութեանն ու համագործակցութեանն ու տարածաշրջանում կայունութեանն ու խաղաղութեան ամրապնդման:

Սուրբ Մենդեան ողջունաբեր անտիպող Զայրապետական մեր օրհնութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ մաղթանքով, որ ջերմ սիրով սրտում պահպանի Տիրոջն ուղղուած օրհներգը եւ մայր Բարձրեալի ամենախնամ Աջի հովանու ներքոյ, հաւատարիմ՝ վերագարթօժից իր տեսիլներին եւ լաւատես, որ երկնային արդարութեան լոյսով պիտի բացուի իր հանդէպ արդարութիւնը վերականգնելու օրհնեալ օրը:

Աղօթք ենք բարձրացնում, որ Փրկչի մեր Տիրոջ շնորհները սփռուեն մարդկանց սրտերում՝ խաղաղութիւն, համերաշխութիւն, ապահով առաջընթաց բերելով աշխարհին: Թող մարդացեալ մեր Տերը՝ Յիսուս Քրիստոս, ամէն ժամ օրհնի եւ առաջնորդի մեր կեանքը, խաղաղ, հաւատքով անուր, սիրով ու միասնական պահպանի մեր ժողովրդին՝ այսօր եւ միշտ փառաբանելու Իր Սուրբ Անունը՝ Զօր եւ Սուրբ Զոգու հետ. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ անտիպ:

ՏՕՆԷՆ ԵՏՔ ՄԵՐ ԲԱԺԻՆԸ

(Շարունակուած Ա. Էջէն)

Երկրորդ՝ ոյժերը եւ կարելիութիւնները ի գործ դնելը անյետածագելի է: «Եկեք երթանք» ըսելը անբաւարար պիտի ըլլայ, եթէ բաժնեկցութիւն չըլլայ անտեսմով: Ասիկա բաշխատանք են Նուիրում կը պահանջէ, մանաւանդ այն հասկացողութեան մէջ թէ ամէն բան որ կ'ընենք եւ կ'ըսենք իր ազդեցութիւնը պիտի ունենայ «բոլոր ժողովուրդին» վրայ: Այլ խօսքով՝ հովիւները միայն իրենց հետաքրքրութիւնը յագեցնելու համար չէր որ որոշեցին ու գացին Բեթլեհեմ, այլ ստուգելու համար բոլոր ժողովուրդին բաժնիք: Անոնք գացին եւ պատմեցին բոլորին, ինչ որ իրենց տեղեկացրէր էին:

Երրորդ՝ ստուգելը եւ իմանալը ինքնանպատակ եւ սահմանափակ փորձառութիւն մը չէ որ կ'ենթադրեն, այլ մայրն ու շարունակական փառաբանութեան կը հասցնեն: Զովիւներուն կեանքը եւ ընթացքը հիմնովին փոխուած պէտք էր ըլլային, քանի անտեսարանիչ կ'արձանագրէ, թէ անոնք դարձան իրենց տեղը եւ կը փառաւորեն ու կ'օրհնեն զԱստուած: Ասիկա անոնց Նոր բարոյականութիւնն էր, զոր ստացրէր էին Յիսուս Մանուկին հանդիպելով: Անոնք շարունակեցին իրենց կեանքը, այդ, սակայն Նոր որակով մը կ'առաջնորդուէր այն: Որակ, որ գործնական էր եւ ոչ՝ պարզապէս տեսական: Այդ որակով ապրելու կանչուած ենք մենք եւս ազգովին:

Տօնին լոյսերը երբ մարին եւ լքեն բոլոր հրավառութիւնները, ժամանակներու շարունակութեան մէջ՝ օրհնութեան եւ փառաբանութեան ծայրեր թող ըլլան մեր ծայրերը, որպէսզի Աստուծոյ ըսածը լսենք, ստուգենք եւ պատմենք: Թող Մուրի Մանուկին յայտնութիւնը մեզ հաղորդ դարձնէ երկինքի բարձրութեան մէջ՝ Աստուծոյ փառքին, երկրի վրայ խաղաղութեան եւ մարդոց մէջ՝ հաճութեան:

ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՆԵԱՅՐ ԶԵՆԻ ՄԵԶԻ ՄԵՇ ԱՆԵՏԻՍ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՐԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻՔՆԱՆԻ ՄՕՏ ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ ԵՒ ԱՅՆ ԶԱՐԱԶԱԿԱՆ ԱՆՁՆԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Երկուշաբթի, 5 Յունուար 2015-ի առաւօտուն, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս, Անթիլիասի Մայրավանքի Վեհարանի գրասենյակին մէջ, ընդունեց այցելութիւնը Լիբանանի մօտ Իրանի Դեսպան Սուհամատ Ֆաթրի Ալիի:



Դեսպանը Նոր Տարուան եւ Ս. Տննդեան բարեմարտութիւնները ներկայացնելու էր, խօսեցաւ Նոյեմբեր 2014-ին Նորին Սրբութեան Իրան կատարած Զոհուածներու այցելութեան դրական անդրադարձին, թէ՛ պետական եւ թէ՛ կրօնական շրջանակներէն ներս:

Ապա Վեհափառ Հայրապետը իր կարգին դեսպանին միջոցաւ շնորհակալութիւն յայտնեց Իրանի պետական պատասխանատուներուն, իրենց ցուցաբերած ջերմ ընդունելութեան համար: Նորին Սրբութիւնը եւ Դեսպան Ֆաթրի Ալիին նաեւ անդրադարձան շրջանէն ներս տեղի ունեցող վերիվայրումներու: Վերջապէս անոնք շեշտեցին Լիբանանի նախագահական շուտափոյթ ընտրութիւններուն կարեւորութիւնը:

Նոյն օրը Արամ Ա. Կաթողիկոս նաեւ ընդունեց այցելութիւնը Լիբանանի Երկխօսութեան Կուսակցութեան ղեկավար Ֆուատ Մախզումիի եւ Արաբական Դրամատուներու Խմբակցութեան նախագահ Դոկտ. Ժոզէֆ Թարապալի:

ՆԵՐԻՆՈՒԹՈՒՄԻ ԱԶԵՐԻՎԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆԸ ՄԱՏՆՈՒԵՑ ԶԱՆՈՂՈՒԹԵԱՆ

(Շարունակում Բ. էջէն)

Ի՞նչ պիտի ասենք հոգեկան խանգարումներ եւ մոլագար բնաւորութիւն ունեցող մարդկանց մասին՝ ոչ մի բան: Այսինքն, եթէ նրանք նման պահուածք են ցուցաբերում ամէն ժամանակ, նոյնիսկ այս տօնական օրերին, բնական է, որ սա չի կարող նորմալ մարդու տպաւորութիւն թողնել եւ նորմալ, էսպէս ասած, ինչ-որ ձեւով մեկնաբանութեան արժանանալ: Նրանք ուղղակի եւս մէկ անգամ ցոյց են տուել իրենց իրական դէմքը, եւ այսպիսի քաղաքականութեամբ նրանք փորում են իրենց իսկ փոսը՝ ուրիշ ոչ մի բան չեն կարող ասել»:

Այս տարի Պաշտում պետք է անցկացունեն համաերոպական առաջին Օլիմպիական խաղերը: Դաւիթ Պապայեանը տարակուսում է, թէ ինչպէս է քաղաքակիրթ Եւրոպան որոշել խաղերը անցկացնել մի երկրում, որը Օլիմպիադայի անցկացման ժամանակահատուածին յատուկ կանոնները անգամ չի պահպանում:

«Հին աշխարհում, գիտեք, որ Օլիմպիական խաղերը նաեւ այսպիսի ժամկետ էր, որ պատերազմներ ու բախումներ չէր լինում, մտաբերվում էր, այսպէս ասած, օլիմպիական: Բայց այդ պետութիւնը նոյնիսկ դա չի յարգում», շեշտեց Լեռնային Ղարաբաղի նախագահի խօսնակը՝ շարունակելով. «Ի՞նչ կարելի է ասել այս ուղղութեամբ՝ միայն ափսոսանք, բայց համապատասխան գործողութիւնները նրանք միշտ պիտի հակահարուածը զգան. միայն դա է իրենց պահում համեմատաբար աւելի, այսպէս ասած, «կայուն եւ հանգիստ» իրավիճակում»:

«Ցանկացած սադրանք 2015-ին նոյնպէս խստագոյնս պատժուելու է»

Ժամեր առաջ յայտարարութեամբ հանդէս եկաւ Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը՝ նոյնպէս վստահեցնելով, որ Լեռնային Ղարաբաղի Պաշտպանութեան բանակի ստորաբաժանումները վստահօրէն վերահսկում են իրավիճակը շփման գծի ողջ երկայնքով:

Հայաստանի ռազմական գերատեսչութիւնը յայտարարում է, որ Սուրբ Տննդեան տօների շեմին ստեղծուած իրավիճակն «Ազրայէճանի ռազմաքաղաքական եւ ռազմական ղեկավարութեան նեղ քաղաքականութեան արդիւնքն է եւ ամբողջովին հակասում է ԵԱՀԿ Մինսքի խմբի շրջանակներում հակամարտութեան կարգաւորման բանակցութիւնների ոգուն ու տրամաբանութեանը»:

Միաժամանակ, Պաշտպանութեան նախարարութիւնը միջազգային հանրութեան եւ մասնաւորապէս Մինսքի խմբի համախառն պետութիւնների ուշադրութիւնն է հրաւիրում «այն անպատասխանատու քաղաքականութեան վրայ, որը, փաստօրէն, 2015 թուականի սկզբից եւեթ վերսկսել է Ազրայէճանի իշխանութիւնը, եւ վերահաստատում է միջազգային հանրութեան կողմից նման քաղաքականութեան հասցեական դատապարտման անհրաժեշտութիւնը»:

«Ազրայէճանի ղեկավարութեան սանձազերծած ցանկացած սադրանք 2015 թուականին նոյնպէս խստագոյնս պատժուելու է եւ անխուսափելիօրէն յանգեցնելու է ազրայէճանական զինուած ուժերի մեծաքանակ կորուստների, որոնց ողջ պատասխանատուութիւնը կրելու են այդ պետութեան իշխանութիւնները», յայտարարում է Հայաստանի պաշտպանութեան նախարարութիւնը:

Պաշտպանութեան կողմէն միջազգային հանրութեանը
Երեկոյեան յայտարարութեամբ հանդէս եկաւ նաեւ Հայաստանի արտգործնախարարութիւնը՝ խստօրէն դատապարտելով ազրայէճանական զինուած տիրերային գործողութիւնները եւ իր խորին ցաւակցութիւնը յայտնելով գոհուածների ընտանիքներին ու մերձաւորներին:

«Այս հերթական սադրանքով Պաշտպանութեան շարունակում է իրագործել ուժի կիրառման վերաբերեալ Ազրայէճանի ղեկավարութեան անդադար սպառնալիքները, որոնք հնչեցնում են այդ երկրի ղեկավարութեան անգամ ամանորեայ ելոյթներում», շեշտում է արտգործնախարարութիւնը՝ շարունակելով. «Սա կոպիտ արհամարհանք է ԵԱՀԿ Մինսքի խմբի համախառն պետութեան կողմէն յայտարարուած սադրանքներին եւ իրավիճակի սրումից գերծ մնալու կոչերի նկատմամբ»:

Հայաստանի արտաքին քաղաքական գերատեսչութեան համոզմամբ՝ վաղուց ժամանակն է, որ միջազգային հանրութիւնը սթափեցնի իր յորդորներին հակառակ զնացող ազրայէճանական ղեկավարութեանը:

ԲԱՐԻ ԳԱԼՈՒՄՏ ՆՈՐ ՏԻԵՉԵՐԱՇՐՋԱՆ

Նոյի տապան ասելով մեր մտքով անցնում է, որ դա տիեզերանաւ է եղել:

Որ ինչ-որ մի մոլորակից՝ Սիրիուսից կամ Հայտնօսից, միգրացի՝ այլ կալաքթիպայից Երկրի նախաբնակները գործուղուել են, որպէսզի այստեղ փորձարկեն մարդկանց, կենդանիների եւ բոյսերի կենսունակութիւնը:

Որքան գիտական յայտնագործութիւնները շատանում են՝ այնքան համոզմունքս մեծանում է, որ հենց այդպէս էլ եղել է:

Չեմ կասկածում, որ տուեալ գիտափորձը վերահսկում է, եւ տիեզերական հեռուներում դրա վերաբերեալ որոշակի եզրակացութիւններ կան:

Այս հարցում, սակայն, աւելի կարելի է մեր եզրակացութիւնը, թէ որքանով ենք բանական երկրաբանական դարձել: Յարմարուելով՝ յարմարուել ենք, բայց արդեօք կատարելագործուել ենք, արժանի՞ ենք մեր նախնիների հանճարեղ ծրագրին:

Անցնող 2014-ը ցոյց տուեց, որ երկրային քաղաքակիրթ հանրութիւն ասուածը խաբկանք է, շախջախուած պատրանք: Մեղրի կաթիլի վրայ գրոհած եւրաերկրները ԱՄՆ-ին հնազանդութեան չտեսնուած ցոյց արեցին՝ պատժամիջոցների, սպառնալիքների, ռազմուժի եւ այլ տեսականիով:

Պարզից պարզ դարձաւ, որ քաղաքական-տնտեսական շահերը վեր են մարդկային տարրական իրաւունքներից:

Պետութիւնների եւ ազգերի իրաւունքներից: Աշխարհի ղեկն իրենց ձեռքում պահող ուժերը պատրաստ են ցանկացած պահի ուրանալ իրենց հռչակած կարգախօսները եւ գործի դնել այսպէսական զեւթերը:

Չյայտարարուող դարձանքերից ի յայտ եկաւ կրօնական մեծամոլների մի բիրտ խմբակցութիւն, որի թիրախում յայտնուեցին նաեւ հայկական գաղթածախները: Ի հարկէ՛ դեր խաղաց թուրքական անմեռ արդէնտիւնները:

Անցնող տարում իմացանք, թէ որքան խակ ու անկանխատեսելի է հայ քաղաքական-վերլուծական հանրութիւնը: Եթէ դու արեւմտամետ ես՝ պետք է ռուսամետներին ատես ու ծանակես, եթէ ռուսամետ ես՝ պետք է ռուսականի հետ երկրպագես նաեւ այդ երկրի ղեկավարներին:

Փոխադարձ նետարձակումների տարի էր, որից փորձեցին օգուտ քաղել ամենահաւանկոտ, միեւնոյն ժամանակ ամենատարակար ուժերը: Աւելի խոհունները դանդաղ ու արժանապատուօրէն լքեցին գրեթէ բոլոր հարթակները: Նրանց լռութեան շրջանն է:

Երկիրը Արեւելքը գերադասեց Արեւմուտքից: Մտածող այրերը Հայաստանի ապագան նշմարեցին քաղաքակրթական Նոր հարթակում: Դա առայժմ միայն իրենք են զգում, յուսանք, որ հայկական աւանդական հեռազգացողութիւնն է գործում: Մասնաւոր իր մոլորակի ստեղծման պահից արեւը ծագում է Արեւելքից՝ լուսաւորելով մարդու միտքը, ոչ թէ բնագոյնը:

2015-ի շեմին ոտք են դնում այսպիսի հակասական, երեւում, փխրուն տրամադրութեամբ:

Յտակ չէ նաեւ, թէ ինչ ենք ակնկալում Ցեղասպանութեան 100-ամեակի նշումից: Տարտամօրէն մի բան գիտենք՝ թուրքին ոչ վստահել կարելի է, ոչ հաւատալ: Նրան մի հնարաւորութիւն կարելի է տալ, որ կարողանա մարդու բուն էութեանը մօտենալ:

Այսուհանդերձ տարին հեռանում է, հրաժեշտը սգոյ ծես չդարձնենք: Գնա բարով:

Բարի գալուստ մեր տարի. լինես յոյսի, կատարումի, մտքի եւ հոգու պայծառութեան տիեզերաշրջան:

Նոյի տապանը Երկիր մոլորակ գործուղածները թող զոջում չապրեն:

Եկուրներս, ով իմանայ, գուցէ հենց՝ քնաբուն բնիկներս, երջանիկ լինելու մի փորձ էլ անենք:

Եթէ անգամ մեզ ուղարկել են՝ հաւատացել են մարդու էութեան հանճարեղութեանը:

Եթէ ոչ հեռաւորներին, գուցէ մեզ դա ապացուցեն:

Նաեւ յիշենք, որ Երկիր մոլորակը մի տապան-տիեզերանաւ է, որի ուղեւորները մենք ենք, բոլորս անխտիր՝ Արեւելքի, Արեւմուտքի, Հիւսիսի ու Հարաւի բնակիչներ:

Բարի սլացք դեպի երջանկութիւն:

ՀԻՎՈՒՅԻ ՓԱՆԱՏՈՒՇԵԱՆ

Հաղորդագրութիւն

Հայոց Ցեղասպանութեան հարիւրամեակի ձեռնարկներու ծիրէն ներս ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդի Լիբանանի Յանձնախումբը, որ կազմուեցաւ 2014-ին, նպատակ կը հետապնդէ այլ միջոցառումներու կողքին, իրաւաբանական օգնութիւն ցուցաբերել արեւմտահայ գրաւեալ հողերու կալուածատերերու դատերու պաշտպանումին, սատարել Հայոց Ցեղասպանութեան ճանաչումին համար տարուող փրօփականտային աշխատանքներուն արաբական թէ՛ օտար մամուլի եւ կայքերու միջոցով, եւ այլ միջոցառումներ որոնց մասին պարբերաբար պիտի տեղեկացուի հանրութեան:

Յանձնախումբը պաշտօնական հանդիպումներ ունեցաւ եւ այցելութիւններ տուաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Հայոց Կաթողիկոս ՆՍՕՏՏ Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Լիբանանի Հայոց Առաքելական Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տ. Շահէ Եպս. Փանոսեանին, Հայկազեան Համալսարանի նախագահ Վեր. Դոկտ. Փօլ Հայտօսթեանին՝ ծանօթացնելով իր ծրագիրներն ու աշխատանքային գործունէութեան ծիրը:

Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի ծիրէն ներս, ներկայ հանգոյնանիւն, հովանաւորութեամբ՝ Հայոց Ցեղասպանութեան Հարիւրամեակի Լիբանանի Կեդրոնական Մարմինին, Յանձնախումբը Լիբանան հրաւիրած է երիտասարդ ակադեմիական Ումիդ Զուրթը, ԱՄՆ Էլաբը Համալսարանէն:

Պրն. Զուրթը հրապարակային դասախօսութիւն մը պիտի տայ Վահան Թեքեան Վարժարանի «Յակոբ Պարսամեան» սրահին մէջ, Ուրբաթ, 23 Յունուար 2015-ի, երեկոյեան ժամը 7:30ին՝ «Թրքական Տեղական Իշխանութեան Պատասխանատուութիւնը Հայոց Ցեղասպանութեան մէջ. Այնթապի Հայրութեան Տեղահանութիւնն ու Բնաջնջումը» վերնագրով:

Պրն. Զուրթը պիտի ունենայ նաեւ փակ սեմինար մը Թեքեան Կեդրոնին մէջ, Շաբաթ, 24 Յունուար 2015ին, կ. ետք ժամը 4էն 7:

Յարգելի ակադեմիականի Պեյուք Կեցութեան շրջանին ծրագրուած է նաեւ ուսանողական հանդիպում մը կայացնել լիբանանահայ ուսանողութեան հետ, Հայկազեան Համալսարանին մէջ:

Յանձնախումբը մամուլով եւ ընկերային ցանցերու միջոցաւ լիբանանահայութիւնը տեղեակ պիտի պահէ ձեռնարկներուն այլ մանրամասնութիւնները՝ յառաջիկայ օրերուն:

ՌԱԿ Հայ Իրաւանց Խորհուրդի Լիբանանի Յանձնախումբ

Այցելեցէ՛ք
Կարդացէ՛ք
Տարածեցէ՛ք

www.RagMamoul.net

ԼՈՅՍ ՏԵՄԱԻ

Հայոց Ցեղասպանութեան 100-Ամեակին ձօնուած
ՌԱԿ Լիբանանի Երջանային Վարչութեան 2015-ի օրացոյցը

Օրացոյցին իւրաքանչիւր ամսուայ էջը զարդարուած է Հայոց Ցեղասպանութիւնը խորհրդանշող նկարչական գործով մը, որոնք ստեղծագործութիւններն են, գեղանկարիչ Գրիգոր Նորիկեանին ՄՍՄԱՆՈՒ ՆԱՄԱՐ ԴՆՍԵՆ, ԹԵՔԵԱՆ ԿԵՐՈՆ

ԼՈՅՍ ՏԵՄԱԻ

«ԶԱՐԹՈՆԵՐ 2015» ԲԱՅԱՂՈՒԿ

Մեր յարգելի ընթերցողներուն կը յայտնենք, թէ արդէն իսկ հրատարակի վրայ է ազգային, քաղաքական, հայրենական, լիբանանեան, միջազգային, պատմական, մշակութային, մարզական, կնոջական, ժամանցի եւ այլ ենթաբաժիններով «ԶԱՐԹՈՆԵՐ 2015» բացառիկը:

«ԶԱՐԹՈՆԵՐ 2015» բացառիկը կարելի է ստանալ օրաթերթի ցրուիչներէն, գրախանութիւններէն եւ խմբագրատունէն:

Մարզական

ՍՈՍԻԵՏԱՏ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՅ ՊԱՐԶԵԼՈՆԱՆ

Սպանիոյ ֆուտբոլի ֆուտբոլիստներու 17-րդ հանգրուանի մրցումներուն ընթացքին, սկսած 17-րդ օրը Սոսիետատը 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Պարչելոնան: Ճորտի Ալպա Ալպալադայի խաբարով Սոսիետատի միակ եւ յաղթանակի կողմ: Վալենսիա վերջ դրաւ 22 յաջորդական յաղթանակ արձանագրած Ռէալ Մատրիտի յաղթարշաւին, երբ 2-1 արդիւնքով արժանի յաղթանակ մը տարաւ Գարչո Անճելոյի խումբին դէմ: Զրիսթիանո Ռոնալտոյ յաջող մտքով Ռէալը, Ալպալադայի հանդիպումին առաջին կողմ: Սակայն Անթոնիո Գարսիան եւ Սիլվա Օթամենտի շրջեցին մրցումին արդիւնքը: Աթլետիկո Մատրիտ 3-1 արդիւնքով պարտութեան մատնեց Լեվանտին: Անթոնիո Կորդան (2) եւ Տիեկո Կոտին Ալպալադայի խաբարով Սոսիետատը Ֆեռնանտո Թորեզ, Լիվորֆուլի, Չելսիի եւ Ա.Ս.Է. Միլանի մէջ իր ասպարէզը շարունակելու ետք, շաբաթավերջին փոխառութեամբ վերամիացաւ իր նախկին ակումբին: Թորեզ Զորեքէաթի օր պիտի մասնակցի Գոփա ՏԷԼ ՌԷ՝ բաժակի քառորդ աւարտականի գծով՝ Աթլետիկո- Ռէալ Մատրիտ ճակատումին:



ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՅԱՎՈՐՈՒՄ
 Ռէալ Մատրիտ՝ 16 մրց. 39 կէտ
 Պարչելոնա՝ 17 մրց. 38 կէտ
 Աթլետիկո Մատրիտ՝ 17 մրց. 38 կէտ

Շաբաթավերջին Անգլիոյ մէջ տեղի ունեցան բաժակի երրորդ հանգրուանի մրցումները: Օրուան մեծագոյն անակնկալը արձանագրուեցաւ Պեմը Լէյն մարզադաշտին մէջ, ուր առաջին դասակարգէն Շեֆիլտ Եունայթըտ խումբը 3-0 արդիւնքով պարտութեան մատնեց Փրոքսմիթըրի Քուինզ Փարք Ռեյնը: Նոր Մարզիչ Ալէ Գարսիանի իշխանութեան տակ, Գրիսթալ Փալաս 4-0 արդիւնքով պարտութեան մատնեց Տոլլոք: Սանտերլանտ 1-0 արդիւնքով յաղթեց Լիծ Եունայթըտին: Մանչեսթըր Սիթի 2-1 արդիւնքով յաղթեց Շեֆիլտ Ուեստընին: Մանչեսթըր Եունայթըտ 2-0 արդիւնքով յաղթեց Եովիլ Թաունին: Չելսի 3-0 արդիւնքով յաղթեց Ուաթֆորտին: Անցեալ տարուան բաժակակիր Արսենալ 2-0 արդիւնքով յաղթեց Զոլ Սիթիին:

ՄԵՐՁԱՄՈՐ ԱՐԵՒԵԼԵԻ ՀԱՅ ԱՖԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆ

Սբ. Ծննդեան Տօնին առիթով, Մերձաւոր Արեւելքի Հայ Աւետարանական Եկեղեցիներու Միութեան Նախագահն ու Կեդրոնական Մարմինը շնորհաւորութիւններ պիտի ընդունին Երեքշաբթի 6 Յունուար 2015ին, կեսօրուան ժամը 12:00-էն մինչեւ կ.ե. ժամը 2:00, Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիի ընդունելութեանց դահլիճին մէջ, Մեքսիք փողոց, Պէյրուք:

**Մ.Ա.Հ.Ա.Ե.Միութեան
Կեդրոնական Մարմին
ԴԻՒՆ**

ԱՅՍՕՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԷՋ 6 ՅՈՒՆԻՍԿԱՐ

- * 1198՝ թագադրուեցաւ Կիլիկիոյ Լեւոն Բ. թագաւորը:
- * 1822՝ ծնաւ գերմանացի գործարար եւ հնագետ Հենրի Ըլիմանը, Տրոյական պարսկական հետազոտողը (մահացաւ՝ 1890):
- * 1888՝ ծնաւ հայ դերասան Վահրամ Փափագեանը (մահացաւ՝ 1968):
- * 1912՝ Նիու Մեքսիքո դարձաւ Միացեալ Նահանգներու 47-րդ նահանգը:
- * 1938՝ ծնաւ իտալացի երգիչ եւ դերասան Ատրիանօ Չելանթանոն:
- * 1955՝ ծնաւ անգլիացի դերասան Ռոուան Աթքինսընը (Մըսթըր Պիլը):
- * 1992՝ Լեռնային Ղարաբաղը հանրաքուէի միջոցով ընդունեց իր անկախութեան հռչակագիրը:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՍՈՒՐԲ ՆԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Տեանն մերոյ Յիսուս Զրիստոսի Սուրբ Ծննդեան տօնին առիթով, Երեքշաբթի 6 Յունուար 2015-ին, հանդիսաւոր Սուրբ եւ Ամմահ Պատարագ պիտի մատուցուի Սուրբ Նշան Մայր Եկեղեցւոյ մէջ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝
ԳԵՐՇ. Տ. ՇԱՐԷ ԵՊՍ. ՓԱՆՈՍԵԱՆ
 ԲԱՐԵՁԱՆ ԱՌԱՋՆՈՐԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅՈՏ

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոգ Զրորինէք	ժամը 7:30-ին ժամը 9:30-ին ժամը 10:30-ին ժամը 11:30-ին
---	--

Սիրով կը հրաւիրենք մեր սիրելի ժողովուրդը ներկայ գտնուելու Սուրբ Պատարագին՝ հաղորդուելու ու զօրանալու համար Բերթեմեան խորհուրդով:

Այնուհետեւ, Առաջնորդ Սրբազան Հայրը, Սուրբ Աստուածայայտութեան տօնին առիթով, շնորհաւորութիւնները պիտի ընդունի ԵՎՂԱԶԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԻՊԱՐԱՆԻ ԴԱՅՂԻՃԻՆ մէջ, պատարագի աւարտէն ետք մինչեւ ժամը 1:00 իսկ կտօքէ ետք ժամը 4:00-էն 6:00:

ԴԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԱՐԱՆ

ՄԵՐՁԱՄՈՐ ԱՐԵՒԵԼԵԻ ՀԱՅ ԱՖԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆ

**Կեդրոնական Մարմին
Լիբանան**

ՓԱՐԱԲԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՇՏԱՍՈՒՆՔ

**Ի Յիշատակ
ՎԵՐ. ՈՊՊԵՐ ՍԱՐԳԻՍԵԱՆԻ
1927-2014**

(Յոգեւոր Հովիւ, Ընկերային Գործիչ)

Կիրակի, 18 Յունուար 2015, կեսօրուան ժամը 12:00-ին Հայ Աւետարանական Առաջին Եկեղեցիին մէջ, Մեքսիք փողոց, Պէյրուք:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ԺԻՆԻԻ Ս. ՅԱՐՈՒԹԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ուրախութեամբ կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին թէ Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին Տեանն մերոյ Յիսուսի Զրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, տեղի պիտի ունենայ Սուրբ եւ Ամմահ Պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝
Հոգեշնորհ Տ. Պետրոս Արք. Մանուէլեան

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոգ Զրորինէք	ժամը 7:30-ին ժամը 9:30-ին ժամը 11:00-ին ժամը 11:30-ին
---	--

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ արարողութեան հաղորդուելու համար օրուան խորհուրդով:

Ծանօթ:
 Ս. Պատարագէն ետք եկեղեցւոյ Տիեզերացի միութիւնը կազմակերպած է փոքրիկներու յատուկ յայտագիր մը մասնակցութեամբ «Ուրախ տարեդարձ» խումբին, որ տեղի պիտի ունենայ եկեղեցւոյ Կարօ Գոնիալեան սրահին մէջ:

La Salderie
DE LUNETTES

**Lunettes Solaires et Médicales
1400 modèles à partir de 10\$**

Autoroute Jdeidah - Tél. (01) 870016 - Pres Boghos Optic

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ Ս. ՊԱՏԱՐԱԳ ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ

Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին, Ս. Ծննդեան եւ Աստուածայայտութեան տօնին առիթով, Հայրապետական հանդիսաւոր Ս. եւ Ամմահ Պատարագ պիտի մատուցուի Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ:

Պիտի պատարագէ եւ Հայրապետական իր պատգամը ուղղէ՝

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

ժամերգութիւն՝ Ս. Պատարագ՝ Զարոգ՝ Զրորինէք՝	ժամը 8-ին ժամը 10-ին ժամը 11-ին ժամը 11.30-ին
--	--

Սուրբ Պատարագի երգեցողութիւնը պիտի կատարուի Կաթողիկոսարանիս «ՇՆՈՐՅԱԼԻ» երգչախումբին կողմէ, ղեկավարութեամբ Հոգ. Տ. Գարեգին Արք. Շիրտմեանի:

Սիրով կը հրաւիրուի հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու Ս. Պատարագին, լսելու Վեհափառ Հայրապետին Պատգամը եւ հաղորդուելու Ս. Ծննդեան խորհուրդով:

ԴԻՒՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ

Ծանօթ.- Սուրբ Պատարագէն ետք, Վեհափառ Հայրապետը շնորհաւորութիւններ պիտի ընդունի Վեհարանի դահլիճին մէջ, մինչեւ ժամը 1:30, եւ կ.ե. ժամը 4-7: Իսկ յաջորդ օր՝ Զորեքշաբթի, առաւօտեան ժամը 10-էն յետմիջօրէի ժամը 1:

Յայտնենք, որ ԽՅԱՆ ԵՐԵՎԱՆԻ, Երկուշաբթի, 5 Յունուար 2015-ին, ՃՐԱԳԱԼՈՅՑԻ Ս. Պատարագը պիտի մատուցուի երեկոյեան ժամը 4-ին: Իսկ Զորեքշաբթի 7 Յունուարին, ՄԵՆԵԼՈՅ ՅԻՇՄԱԿԻ, դարձեալ Ս. Պատարագ պիտի մատուցուի Մայր Տաճարին մէջ, առաւօտեան ժամը 10-ին:

ՍՈՒՐԲ ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ ՆՈՐ ՀԱՃՆՈՅ Ս. ԳԵՐՈՎ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Ուրախութեամբ կը յայտարարենք մեր հաւատացեալ ժողովուրդին թէ Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին Տեանն մերոյ Յիսուսի Զրիստոսի Ս. Ծննդեան տօնին առիթով, տեղի պիտի ունենայ Սուրբ եւ Ամմահ Պատարագ:

Պիտի պատարագէ եւ քարոզէ՝
**Գերապատիւ Տ. Յուսիկ Ծայրագոյն
Վարդապետ Մարտիրոսեան**

Սկիզբ ժամերգութեան Պատարագ Զարոգ Զրորինէք	ժամը 8:00-ին ժամը 9:30-ին ժամը 11:00-ին ժամը 11:30-ին
---	--

Սիրով կը հրաւիրենք մեր հաւատացեալ ժողովուրդը ներկայ գտնուելու հոգեպարար Սուրբ արարողութեան եւ լսելու հայր Սուրբին Պատգամը:

**ԹԱՐԱԿԱՆՈՒԹԻՆ
Ս. ԳԵՐՈՎ ԵԿԵՂԵՑԻՈՅ**

ՅԵՏԱԻԶՕՐԵԻ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաճոյքն ունինք ծանուցելու, թէ Յունուար 2015-էն սկսեալ, պիտի սպասարկուի յետմիջօրէի դասընթացները, Անթիլիասի շրջանին մէջ, գլխաւորութեամբ եւ անմիջական մասնակցութեամբ Տի. Ալին Աւարտեան Չաքարեանի, ինչպէս նաեւ մասնագետ ուսուցիչներու հսկողութեամբ:

Սոյն յետմիջօրէի դպրոցական յայտագիրը կ'ընդգրկէ լիբանանեան կրթական ծրագրի գիտական եւ լեզուական բոլոր դասընթացները:

Սոյն յետմիջօրէի դպրոցական յայտագիրը կը հաւաստիացնէ աշակերտին յաջողութիւնը, որովհետեւ ծրագիրը գլխաւորող պատասխանատու ուսուցիչները ունին մեծ փորձառութիւն ուսուցչական ասպարէզին մէջ:

Սոյն յետմիջօրէի դպրոցական յայտագիրին կրնան իրենց մասնակցութիւնը բերել 7-12րդ դասարանի աշակերտները, երեկոյեան ժամը 4:00-7:30:

Յաւելեալ տեղեկութեանց համար կարելի է կապ հաստատել, հեռաձայնելով՝
 03-331837 alineavsharian@windowslive.com
 Կառատուել կապահովուած:

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» RagMamoul.net-ի Մեկնարկման Վիճակահանութեան Արդիւնքը

Ուրախ ենք յայտարարելու, որ RagMamoul.net-ի Մեկնարկման Վիճակահանութիւնը կը շահի 296 թիւը կրող տոմսը:

Վերոյիշեալը՝ վերջին երեք թիւերն են 2015 տարեգումիս յատուկ Լիբանանեան Պետական Վիճակահանութեան մեծագոյն պարգէնը շահող տոմսակիրը:

Արդիւնքը կարելի է ստուգել նաեւ այցելելով Լիբանանեան Պետական Վիճակահանութեան յատուկ կայքը՝ www.ildj.com

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ»-ի այն բարեկամը, որուն տոմսը կը կրէ 296 թիւը, թող բարեհաճի թուականէ մինչեւ ՄԵԿ ԱՄԻՍ կապուի խմբագրութեանս հետ ստանալու համար իր պարգէնը՝ +961 3 824833 / + 1 936 666 2011 /ragmamoul@gmail.com

RagMamoul.net

ՌԱՄԿԱԿԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՆ Պայթար Ակումբ

ՃԱՇԿԵՐՈՅԹ - ՊԱՐԱՆԱՆԴԷՍ

Հովանաւորութեամբ՝ Լիբանանի Շրջանային Վարչութեան

Կ'երգէ՝ Գօգօ Սկրտիչեան

Մասնակցութեամբ՝ պուզուքիստ Յարութ Կուլուգեանի

Տեղի կ'ունենայ Երեքշաբթի, 6 Յունուար 2015-ին, երեկոյեան ժամը 9-էն սկսեալ Թէքեան Կեդրոնին մէջ, Ժընմէյի:

Our e-mail addresses are:

zartonkadl@gmail.com

zartonkdaily@yahoo.com

website:

www.zartonkdaily.com

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ» RagMamoul.net-ի Մեկնարկման Վիճակահանութեան Արդիւնքը

Ուրախ ենք յայտարարելու, որ RagMamoul.net-ի Մեկնարկման Վիճակահանութիւնը կը շահի 296 թիւը կրող տոմսը:

Վերոյիշեալը՝ վերջին երեք թիւերն են 2015 տարեգումիս յատուկ Լիբանանեան Պետական Վիճակահանութեան մեծագոյն պարգէնը շահող տոմսակիրը:

Արդիւնքը կարելի է ստուգել նաեւ այցելելով Լիբանանեան Պետական Վիճակահանութեան յատուկ կայքը՝ www.ildj.com

«ՌԱԿ ՄԱՄՈՒԼ»-ի այն բարեկամը, որուն տոմսը կը կրէ 296 թիւը, թող բարեհաճի թուականէ մինչեւ ՄԵԿ ԱՄԻՍ կապուի խմբագրութեանս հետ ստանալու համար իր պարգէնը՝ +961 3 824833 / + 1 936 666 2011 /ragmamoul@gmail.com

RagMamoul.net